



Գործ № ՇԴ/0083/02/13/

ՎՃԻՌ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

30 օգոստոսի 2013թ.


ք. Գյումրի

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ
նախագահությանը՝ դատավոր
քարտուղարությանը՝
մանակցությանը՝

Հ. Ղազարյանի
Լ. Գրիգորյանի
Ս.Մուրադյանի

սկզբնական հայցով հայցվոր, հակընդդեմ հայցով պատասխանող սկզբնական հայցով հայցվոր, հակընդդեմ հայցով պատասխանող Թամարա Տոնոյանի օրինական ներկայացուցիչ	Հ.Սեդրակյանի Հ.Սեդրակյանի
սկզբնական հայցով հայցվոր, հակընդդեմ հայցով պատասխանող Հ. Սեդրակյանի ներկայացուցիչ սկզբնական հայցով պատասխանող հակընդդեմ հայցով հայցվոր սկզբնական հայցով պատասխանող հակընդդեմ հայցով հայցվոր սկզբնական հայցով պատասխանողներ հակընդդեմ հայցով հայցվորների ներկայացուցիչ	Ա.Հովսեփյանի Ա. Տոնոյանի Ա.Մակարյանի Ա.Գևորգյանի
հակընդդեմ հայցով երրորդ անձի ներկայացուցիչներ	Գ.Բաղդասարյանի Ա.Հախվերդյանի

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Հայկանուշ Մելիքի Սեդրակյանի (անձնագիր՝ AE 0584139, տրված 02.06.2000թ.-ին, 016-ի կողմից) և Թամարա Արամի Տոնոյանի (ծնոյան վկայական՝ ԱԱ № 066414, տրված 20.01.1997թ.-ին ԲԿԱԳ Գյումրու տարածքային բաժնի կողմից) անունից նրա օրինական ներկայացուցիչ Հայկանուշ Մելիքի Սեդրակյանի ընդդեմ Արամ Հակոբի Տոնոյանի (անձնագիր՝ AM 0712976, տրված 03.05.2012թ.-ին 016-ի կողմից) և Ալվինա Համբարձումի Մակարյանի (անձնագիր՝ AE 0380191, տրված 22.07.2000թ.-ին 016-ի կողմից)՝ բնակտարածության օգտագործման իրավունք և կարգ սահմանելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի Արամ Հակոբի Տոնոյանի և Ալվինա Համբարձումի Մակարյանի ընդդեմ Հայկանուշ Մելիքի Սեդրակյանի և Թամարա Արամի Տոնոյանի, երրորդ անձանց ՀՀ Շիրակի մարզպետարանի, ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ բնակարանից վտարելու պահանջի մասին,



Պ Ա Ր Չ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

25.01.2013թ.-ին ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում (այսուհետ՝ նաև Դատարան) մուտքագրվել է Հայկանուշ Մելիքի Սեդրակյանի և Թամարա Արամի Տոնոյանի անունից նրա օրինական ներկայացուցիչ Հայկանուշ Մելիքի Սեդրակյանի հակընդդեմ հայցադիմումն ընդդեմ Արամ Հակոբի Տոնոյանի, երրորդ անձ Ալվինա Համբարձումի Մակարյանի՝ ալիմենտի բռնագանձման, բնակտարածության օգտագործման իրավունք և կարգ սահմանելու պահանջների մասին:

Դատարանի 25.01.2013թ.-ի որոշմամբ հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 25.01.2013թ.-ի մեկ այլ որոշմամբ ըստ հայցի Արամ Հակոբի Տոնոյանի ընդդեմ Հայկանուշ Մելիքի Սեդրակյանի՝ ամուսնալուծության պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի Հայկանուշ Մելիքի Սեդրակյանի և Թամարա Արամի Տոնոյանի անունից նրա օրինական ներկայացուցիչ Հայկանուշ Մելիքի Սեդրակյանի ընդդեմ Արամ Հակոբի Տոնոյանի, երրորդ անձ Ալվինա Համբարձումի Մակարյանի՝ ալիմենտի բռնագանձման, բնակտարածության օգտագործման իրավունք և կարգ սահմանելու պահանջների մասին քաղաքացիական գործից՝ Հայկանուշ Մելիքի Սեդրակյանի և Թամարա Արամի Տոնոյանի անունից նրա օրինական ներկայացուցիչ Հայկանուշ Մելիքի Սեդրակյանի ընդդեմ Արամ Հակոբի Տոնոյանի, երրորդ անձ Ալվինա Համբարձումի Մակարյանի՝ բնակտարածության օգտագործման իրավունք և կարգ սահմանելու պահանջի մասն առանձնացվել է առանձին վարույթում:

06.03.2013թ.-ին Դատարանում մուտքագրվել է Արամ Հակոբի Տոնոյանի և Ալվինա Համբարձումի Մակարյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Հայկանուշ Մելիքի Սեդրակյանի և Թամարա Արամի Տոնոյանի, երրորդ անձ ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ բնակարանից վտարելու պահանջի մասին:

Դատարանի 07.03.2013թ.-ի որոշմամբ հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 28.03.2013թ.-ի արձանագրային որոշմամբ՝ հակընդդեմ հայցի մասով, գործով որպես երրորդ անձ է ներգրավվել ՀՀ քաղաքաշինության նախարարությունը:

Դատարանի 28.03.2013թ.-ի արձանագրային մեկ այլ որոշմամբ՝ սկզբնական հայցի մասով, երրորդ անձ Ալվինա Համբարձումի Մակարյանը ներգրավվել է որպես երկրորդ պատասխանող:

28.03.2013թ.-ին Հայկանուշ Մելիքի Սեդրակյանը և Թամարա Արամի Տոնոյանը Դատարանին ներկայացրել են հակընդդեմ հայցի պատասխան:

Դատարանի 18.04.2013թ.-ի արձանագրային որոշմամբ գործով նշանակվել է դատաբնություն:

03.05.2013թ.-ին երրորդ անձ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը Դատարանին ներկայացրել է հայցադիմումի պատասխան:

Հայցվոր Հայկանուշ Մելիքի Սեդրակյանի իրավական դիրքությունը

Հայցվոր Հայկանուշ Սեդրակյանը, որը հանդես է եկել նաև իր ուստեղ հայցվոր Թամարա Արամի Տոնոյանի անունից, հայցապահանջը հիմնավորել է կենսյալ փաստարկներով:

